ՈՍԱԿ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը	**Հայաստանի ազգային ագրարային համալսարան**
Հապավումը	**ՀԱԱՀ**
Գործունեության հասցեն	***Տերյան փող. 74, Երևան, 0009, ՀՀ***
Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը	**Չի ունեցել**

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը (այսուհետ՝ ՈԱԱԿ), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի (այսուհետ՝ ՀԱԱՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ՀԱԱՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ՀԱԱՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը.

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում՝	**5 մարտի 2012,**
բուհի ինքնավերլուծության ներկայացում՝	**2 հոկտեմբերի 2012,**
փորձագիտական այցիրականացում՝	**3-7 դեկտեմբերի 2012,**
փորձագիտական զեկույցի ներկայացում՝	**1 մարտի 2013,**
թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝	**14 փետրվարի 2014:**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով[2]:

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ՀԱԱՀ-ը գյուղատնտեսական ոլորտի բազմամյա փորձով միակ պետական բուհն է հանրապետությունում և հավակնում է դառնալ «տարածաշրջանային նշանակության առաջատար կրթական, գիտահետազոտական և խորհրդատվական ծառայություններ մատուցող կենտրոն»: ՀՀ Կառավարությունը, կարևորելով ագրարային կրթության գործնական ուղղվածությունը, համալսարանի բոլոր մասնագիտությունների համար բակալավրական ուսուցման տևողությունը սահմանել է չորս տարի ութ ամիս:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել. կրթության որակի ապահովումը իրականացվել է որակի վերահսկման որոշ մեխանիզմների կիրառման միջոցով: Հավատարմագրման այս գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է՝ կրթական միջավայրի բավարարության, ծրագրերի իրականացման արդյունավետության, հասարակության առջև հաշվետվողականության և վերջերս ներդրված որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման նպատակով: Համալսարանն Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտում ունի «Ագրոբիզնես և շուկայաբանություն» կրթական ծրագրի արտաքին գնահատման փորձ, որն իրականացվել է 2011 թվ. միջազգային փորձագիտական խմբի կողմից՝ ԱՄՆ Գյուղդեպարտամենտի նախաձեռնությամբ:

Համալսարանը արտոնված է ուսուցման եռաստիճան համակարգում կադրեր պատրաստել 37 մասնագիտություններով, որանց մի մասը եզակի է ոչ միայն տարածաշրջանում, այլև ԱՊՀ անդամ երկրների ագրարային բուհերի համար: Համաձայն իր առաքելության, համալսարանը պետք է առաջարկի «ագրարային ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող և դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող» կրթական ծրագրեր: Ծրագրերի մեծ մասը վերջին տարիներին մի քանի անգամ վերանայվել են: Ընթացքի մեջ է դասընթացների ծրագրերի նկարագրումը կրթական վերջնարդյունքներով (գիտելիք, հմտություն, կարողություն):

Ժամանակակից ծրագրեր ունենալու պահանջը համալսարանը ձգտում է իրականացնել հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման միջոցով: Մասնակցությունը TEMPUS-ի շրջանակներում կատարվող

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

աշխատանքներին համալսարանն օգտագործում է իր կրթական ծրագրերը բենչմարքինգ անելու և արդի ծրագրեր մշակելու նպատակով:

Համալսարանում իրականացվող հետազոտության արդյունքների դասավանդման պրոցեսում կիրառելը և մագիստրատուրայի ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելը վկայում են դասավանդման և հետազոտության միջև կապի առկայության մասին:

Համալսարանի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս մասամբ բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Մոտակա ժամանակներում կտրուկ լավացման հավանականությունը շատ փոքր է բուհի թույլ ֆինանսական հնարավորությունների պատճառով: Հիմնականում ուսանողների վարձավճարներից ձևավորվող ֆինանսական ռեսուրսները մեծամասամբ ծախսվում են աշխատավարձի վճարման վրա և չեն բավականացնում, որ ուսումնական և գիտական ստորաբաժանումները ապահովվեն անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով:

Միջոցներ չեն հատկացվում նաև միջազգային համագործակցության համար, և արտաքին ֆինանսավորման ընդհատման պարագայում կարող է վտանգվել ոլորտի կայունությունը, ինչպես նաև դասախոսական կազմի ներկայիս ոչ բարձր շարժունությունը:

Համալսարանում ներկայումս աշխատում է արհեստավարժ և դասավանդման մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որը նպաստում է կրթական ծրագրերի հիմնական նպատակներին հասնելուն: Դասախոսների միջին տարիքը 65 է: Ուսանող-դասախոս միջին թվերի հարաբերությունը կազմում է 16,6/1: Ցածր աշխատավարձը և մոտիվացիայի պակասը դժվարացնում են երիտասարդ և որակյալ մասնագետների ներգրավումը, և այս գործոնը ոչ շատ հեռու ապագայում համալսարանին կարող է ռիսկի տակ դնել: Լիովին չեն օգտագործվում կադրային ներուժի համալրման և բարելավման ասպիրանտուրայի, դասախոսական կազմի պարբերական վերապատրաստման ու ստաժորների ինստիտուտի՝ համալսարանում առկա հնարավորությունները: Պրոֆեսորադասախոսական կազմը զբաղվում է հետազոտական աշխատանքներով, սակայն քիչ են նրանց կողմից իրականացվող միջազգային մակարդակի աշխատանքները: Դասախոսական կազմի փոքր մասը ունի միջազգային փորձառություն արտասահմանյան կառույցների հետ համալսարանի իրականացրած ծրագրերի արդյունքում:

Համալսարանում մտահոգված են ուսանողների ուսումնառությամբ, միջավայրի ուսանողակենտրոնության և տրամադրվող կրթության վերաբերյալ ուսանողների տեսակետով: ՈՒսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող մեխանիզմները նեկայումս ապահովում են դիմորդների կայուն հոսք, սակայն ընդունվողների թվի աճին զուգահեռ մեծ թիվ են կազմում նաև բուհից հեռացվողները: Ուսանողները նշեցին մի քանի բարելավումներ (դասավանդման և գնահատման նոր մեթոդներ, ենթակառուցվածք և գրադարանային ռեսուրսներ): Նրանք արժևորում են համալսարանի կողմից առաջարկվող գործնական ուսումնառությունը և օժանդակությունը, սակայն գտնում են, որ ոչ միշտ են բավարարվում իրենց կարիքները՝ բուհի կառավարմանը փաստացի մասնակցելու, գիտական հետազոտություններ իրականացնելու և կարիերայի հետագա զարգացման հնարավորություններ տրամադրելու տեսանկյունից:

Համալսարանի կառավարման համակարգն անցյալում լավ ծառայել է իր նպատակին: Սակայն ներկայումս այն ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև է կանգնած, որոնք պահանջում են ավելի հիմնավորված, ուսանողակենտրոն մոտեցումներով, ավելի հաշվետվողական որոշումների կայացման գործընթացներ, լրացուցիչ ռեսուրսներ և լավ տեղեկատվական համակարգ: Համալսարանը կառուցվածքային փոփոխությունների իրականացման գործընթացում է, և նոր համակարգի արդյունավետության մասին կարելի է դատել որակի կառավարման սկզբունքով իրականացված գործընթացների մեկ շրջափուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն:

Համալսարանի բոլոր մակարդակներում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է արտաքին պահանջներով: Տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ գործընթացների կազմակերպման համար: Որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է. Ճիշտ է, ընթանում են որոշակի գործընթացներ, սակայն թույլ է շահակիցների մասնակցությունը, և հիմնական մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Համալսարանում գործում է կառավարման կանոնակարգված համակարգ, որի տարբեր մակարդակներում ընդգրկված են դասախոսական կազմի և ուսանողության ներկայացուցիչներ,
2. Կրթական ծրագրերի բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը համապատասխանում են ՀՀ Պետական կրթական չափորոշիչներին, որոնք մշակվել են համալսարանի մասնագետների կողմից: Ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգ, ինչպես նաև սահմանված է գնահատման բազմագործոնային համակարգ: Առկա է կրթական ծրագրերի և դասընթացների մշտադիտարկման, արտաքին գնահատման լավ փորձ Ագրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտում,
3. Համալսարանում աշխատում է բարձրակարգ և փորձառու պրոֆեսորադասախոսական կազմ, որի որակից ընդհանուր առմամբ ուսանողները բավարարված են,
4. Ագրոբիզնեսի դեպարտամենտը ագրոբիզնեսի տնտեսագիտության ոլորտում տարածաշրջանի միակ կրթական օջախն է, որն ուսուցումը կազմակերպում է անգլերեն լեզվով,
5. Համալսարանը ունի հասարակությանը գիտելիքի փոխանցման և ծառայությունների մատուցման լավ փորձ (քաղծառայողների վերապատրաստման դասընթացների, ֆերմերային տնտեսությունների համար խորհրդատվական դասընթացների կազմակերպում «Ագրոգիտասփյուռ» դեպարտամենտի միջոցով),
6. ՀԱԱՀ-ն ունի որակի ապահովման կառույց, այդ ոլորտում վերապատրաստումներ անցած և աշխատանքային որոշակի փորձառություն ունեցող անձնակազմ, մասամբ համակարգված որակի ապահովման գործընթացներ, մշակված և փորձարկված գնահատման որոշ գործիքներ:

Հաստատության թույլ կողմերն են.

1. Համալսարանում չեն գնահատվում առաքելության ու նպատակների իրականացման արդյունքները, չի իրականացվում տարեկան գործողությունների ամբողջական պլանավորում, բացակայում են ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև մշտադիտարկման մեխանիզմները: Ռեսուրսների բաշխման հստակ քաղաքականության բացակայության պայմաններում չի իրականացվում առաջնահերթությունների վերհանում և համապատասխան պլանավորում ըստ այդ առաջնահերթությունների, ցածր է ուսումնական և գիտական ստորաբաժանումների է նյութատեխնիկական հագեցվածության աստիճանը,
2. Կրթական ծրագրերի վերանայումը տեղի է ունեցել առանց բենչմարքինգի, փորձաքննության, շահակիցների բավարար մասնակցության և աշխատաշուկայի պահանջների ուսումնասիրության, մասնագիտական և տեխնոլոգիական առաջընթացի հաշվառման, ավելի շուտ արտաքին պահանջներից ելնելով (Բոլոնյայի գործընթաց, Հավատարմագրման փորձարկում), քան որպես համալսարանի քաղաքականություն,
3. Դասավանդման և ուսումնառության մեթոդների կիրառումը համակարգված չէ,
4. Ծրագրերի միջազգայնացման առումով դեռևս նկատելի առաջընթաց չկա, ինչը արտացոլվում է դասախոսների և ուսանողների շարժունության ցածր մակարդակում,
5. Քիչ են պրոֆեսորադասախոսական կազմի կողմից իրականացվող ժամանակակից հետազոտությունները, որոնց արդյունքները համապատասխանում են միջազգային մակարդակի և տեղ են գտնում վերանայված ծրագրերում,
6. Դասախոսական հիմնական կազմը տարեց է, և լուրջ խնդիրներ կան անձնակազմի երիտասարդացման հարցում: Հստակ և թափանցիկ չեն դասախոսների ընտրության, գնահատման և ատեստավորման, մասնագիտական զարգացման, նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման և խրախուսման մեխանիզմները և ընթացակարգերը:

Համալսարանին առաջարկվում է.

Առաքելությունը և նպատակները.

1. Ապահովել բոլոր շահակիցների կարիքների փաստացի արտացոլումը համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների մեջ, ինչպես նաև արդյունքների գնահատման և բարելավման գործընթացներում շահակիցների մասնակցությունը:

Կառավարումն ու վարչարարությունը.

2. Համալսարանի ողջ վարչարարությունը կազմակերպելիս և արդյունքները գնահատելիս առաջնորդվել որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, ստուգում, բարելավում),
3. Կանոնակարգել համալսարանի ֆինանսների տնօրինումը, նրա գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը, կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը,
4. Ավելացնել դասախոսական կազմի և ուսանողների գործնական մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացներին բոլոր մակարդակներում:

Մասնագիտության կրթական ծրագրերը.

5. Իրականացնել ՄԿԾ-ների խոշորացում, բոլոր ծրագրերի համար հրապարակել կրթական վերջնարդյունքները, կանոնակարգել ծրագրերի մշտադիտարկումը, արդյունավետության գնահատումը և պարբերական վերանայումը,
6. Կրթական ծրագրերը մշակելիս և դրանց ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրելիս ապահովել շահակիցների մասնակցությունը, իսկ դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման մեթոդների ընտրության հիմքում դնել այդ վերջնարդյունքները: Մշակել ուսանողների գնահատման պրոցեսում ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ, ինչպես նաև կանոնակարգել գնահատման բողոքարկման գործընթացը,
7. Քայլեր ձեռնարկել կրթական ծրագրերի՝ նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ նպատակային բենչմարկինգի և բովանդակային համահունչության ապահովման ուղղությամբ:

Ուսանողները.

8. ՈՒսանողների հավաքագրման գործընթացը դարձնել հասցեագրված՝ հաշվի առնելով հանրապետությունում համապատասխան ոլորտի մասնագետների պահանջարկը,
9. Կոնկրետ գործողություններ իրականացնել ուսանողակենտրոն միջավայր ձևավորելու ուղղությամբ. վերհանել ուսանողների կրթական կարիքները, կարևորել այդ կարիքները կրթական գործընթացների կազմակերպման ժամանակ, տրամադրել խորհրդատվություններ և կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ, վերանայել ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի աշխատանքները,
10. Կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակը ընդլայնել՝ այն ուղղել շրջանավարտների զբաղվածության և շրջանավարտների հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը,
11. ՈՒսումնառողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու գործընթացը դարձնել համակարգված և նպատակաուղղել ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորմանը:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը.

12. Քայլեր ձեռնարկել պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման ուղղությամբ,
13. Մշակել համալսարանի յուրաքանչյուր կրթական ծրագրին համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,
14. Մշակել դասախոսական կազմի պարբերաբար գնահատման քաղաքականություն և ընթացակարգեր, կատարելագործել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի գնահատման գործիքները,
15. Մշակել դասախոսների կարիքների գնահատման համակարգ և իրականացնել նրանց կատարելագործման ավելի նպատակաուղղված աշխատանքներ ըստ այդ կարիքների:

Հետազոտությունը և զարգացումը.

16. Հստակեցնել հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունները և հավակնությունները, մշակել հետազոտությունների իրականացումը և հեռանկարը ապահովող քաղաքականություն և ընթացակարգեր,
17. Իրականացնել հետազոտական գործունեության միջազգայնացմանը նպաստող գործողություններ,
18. Ամրացնել համալսարանում տարվող հետազոտությունների կապը ուսումնական գործընթացների հետ:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ.

19. Իրականացնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության պարբերական գնահատումներ,
20. Մշակել այնպիսի ֆինանսական քաղաքականություն, որն ուղղված լինի ներդրումային միջավայրի ստեղծմանը,
21. Բարելավել ՀԱԱՀ ուսումնագիտական բազան, լաբորատորաների հագեցվածությունը՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրը կատարելագործելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով,
22. Կարգավորել տեղեկատվության կառավարման և փաստաթղթավարման գործընթացները:

Հասարակական պատասխանատվությունը.

23. Կատարելագործել հաշվետվողականության ձևերը և ներբուհական գործընթացների թափանցիկությունը ներքին և արտաքին շահեկիցների համար,
24. Մշակել հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և ընթացակարգեր: Տարածել ազրոբիզնեսի ուսուցման դեպարտամենտի հասարակության հետ կապերի փորձը և դրա մեխանիզմները ՀԱԱՀ-ի մյուս ստորաբաժանումներում,

Արտաքին կապերը և միջազգայնացումը.

25. Համալսարանում ստեղծել փորձի փոխանակմանը, միջազգայնացմանը և զարգացմանը նպաստող միջավայր, բարելավել արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի աշխատանքը:

Որակի ներքին ապահովման համակարգը.

26. Մշակել ՀԱԱՀ-ի կրթության որակի ապահովման քաղաքականությանը համապատասխան ընթացակարգեր, ձևավորել որակի ապահովման ձեռնարկ: Բոլոր փաստաթղթերը հրապարակել համալսարանի կայք-էջում,
27. Գնահատել որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով համալսարանի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարությունը և արդյունքները հաշվի առնել ռեսուրսների պլանավորման մեջ,

28. Կիրառել որակի ապահովման մեխանիզմներ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման գործընթացների նկատմամբ,
29. Ավելացնել որակի ներքին ապահովման գործընթացներին ներքին և արտաքին շահակիցների, նամանավանդ ուսանողների, ընդգրկվածությունը,
30. Գնահատել համալսարանական գործընթացների թափանցիկությունը և դրանց որակի մասին ներքին և արտաքին շահակիցներին տրամադրող տեղեկատվության օբյեկտիվությունը,
31. Առանձնացնելել այնպիսի տեղեկատվության քանակ, գործարկել տեղեկատվության հավաքման այնպիսի մեխանիզմներ, որոնք ձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

ՀԱԱՀ-ն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման Գիտական խորհրդի կողմից 7.02.2014թ. կայացած նիստում հաստատված ծրագիր:

ՈՒսումնասիրելով այդ ծրագիրը, կարելի է եզրակացնել.

1. Համաձայն ծրագրի՝ բուհը հանձն է առնում իրականացնել երեսունից ավել խնդիրների շուրջ փորձագիտական խմբի տրամադրած խորհրդատվությունները: Խումբը գտնում է, որ հրատապ փոփոխություններ պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են պլանում, և անհրաժեշտ ռեսուրսներ են տրամադրվելու դրանց իրականացմանը մոտակա երկու տարիների ընթացքում՝ մինչև 2015 թվականի վերջը:

Սակայն հրատապ լուծում պահանջող մի շարք խնդիրներ չեն կարևորվել բավարար չափով.

a) Նոր՝ վերանայված և բարելավված կրթական ծրագրերը, որոնք ձևակերպված կլինեն կրթական վերջնարդյունքներով և համեմատված կլինեն նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերի հետ, բուհը սկսելու է ներդնել 2016 թվականից, իսկ ծրագրերի խոշորացմանը ուղղված խորհրդատվությունը մնացել է ուշադրությունից դուրս:
b) Համալսարանի համար հրատապ է դասախոսական կազմի երիտասարդացման խնդիրը, մինչդեռ պլանավորվում է համապատասխան քաղաքականություն մշակել 2015-ին. ավելին, դասախոսական կազմի մասնագիտական որակների՝ կրթական ծրագրերի պահանջներին համապատասխանության վերլուծությունը սկսվելու է ավելի ուշ՝ 2016 թվականին:
c) Հրատապ իրականացում պահանջող այլ խորհրդատվություններ վերաբերում են մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայրի բարելավմանը՝ ուսումնանյութական բազայի զարգացմանը և հետազոտական լաբորատորիաների հագեցվածության մեծացմանը: Ուսումնական լաբորատորիաների և ամբիոնների տեխնիկական հագեցվածության ապահովումը աչքաթող է արված, իսկ հետազոտական

սարքավորումների արդիականացման ծրագիր բուհը կունենա 2017 թվականին միայն:

d) Թվում է, թե բուհը առաջնահերթ պետք է համարեր նաև փորձագիտական խմբի տված խորհրդատվությունը ֆինանսական միջոցների ձևավորման և բաշխման գործընթացների համակարգման վերաբերյալ, մինչդեռ պլանավորվում է ունենալ բյուջեի բաշխման քաղաքականություն միայն 2015-ի նոյեմբերին:

e) Հասարակական պատասխանատվության ոլորտում դարձյալ շարունակում են ռեկտորի և ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվությունների հրապարակումը դիտարկել թափանցիկության ապահովման միակ մեխանիզմ, մինչդեռ ակնկալվում էր դրանց բազմազանեցում և հրապարակայնության պահանջի տարածում բոլոր գործընթացների վրա:

2. Բուհն իր գործողությունները և դրանց իրականացման քայլերը ներկայացրել է ոչ այնպես, ինչպես որ ակնկալվում էր: Բուհը ավելի շատ կարևորում է գործընթացների փաստաթղթային կանոնակարգումը՝ տարբեր քաղաքականությունների, ընթացակարգերի և մեխանիզմների մշակումը, քան թե դրանց իրականացումը և նպատակներին համապատասխան ազդեցության ուսումնասիրումը: Ավելին, որոշ դեպքերում կանոնակարգող փաստաթղթերի մշակման հաջորդականությունը և քայլերի իրականացման ժամկետների տրամաբանությունը լրացուցիչ հստակեցման կարիք ունեն: Այսպես, կրթական ծրագրերի վերանայումը պլանավորված էր սկսել արդեն 2014 թվականից, իսկ վերջնարդյունքների վերանայման քաղաքականության մշակումը՝ միայն 2015 թվականին: Մտահոգիչ է, որ գործողությունների և քայլերի մշտադիտարկման և գնահատման ընթացակարգերի և ցուցիչների մշակումը պլանավորված է իրականացնել ավելի ուշ, քան սկսվում են գործընթացները:

3. Բոլոր քայլերի համար հստակ նշված են պատասխանատու անձը և աշխատանքային խումբը, տրամադրվող ռեսուրսները: Քայլերի մեծ մասը ներառում են իրատեսական ժամկետներ, չնայած որ որոշ հրատապ խնդիրների դեպքերում, օրինակ, ուսանողներին՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավումը, առանձնացված չեն փուլեր և ամփոփման ժամկետներ:

4. Վերջնարդյունքները ծրագրում հիմնականում այնպիսին են, որ ցույց չեն տալիս բարելավումների որակական արդյունքները, թե որակական ինչպիսի փոփոխություններ կարելի է ակնկալել տվյալ գործողության ավարտին: Պլանավորված են համալսարանի գործունեության հիմնական ոլորտների կարգավորման բազմաթիվ քաղաքականությունների, ընթացակարգերի և մեխանիզմների մշակում: Չի հայտարարվում, սակայն ենթադրվում է, որ այդ փաստաթղթերը կիրառության մեջ կմտնեն մշակումից անմիջապես հետո:

Եզրահանգում. Ծրագրի հիմնական մասի իրականացումը ռիսկեր չի պարունակում: Ծրագրի հաջող իրականացման արդյունքում մոտակա երկու տարվա ընթացքում մշակված կլինի հիմնական ոլորտներում համալսարանի գործողությունները կանոնակարգող նորմատիվային դաշտը և սկսված կլինեն որակի ապահովման հիմնական գործընթացները,

որից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ՀԱԱՀ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա՝

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Հետազոտություն և զարգացում, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) վերանայել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագիրը՝ հաշվի առնելով սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

Փորձագ. խմբի ղեկավար **ՈԱԱԿ Համակարգող**

Հավելված 1

Փորձագիտական խմբի կազմը.

- Պրոֆ. Մարինկա Բաղդասարյան, տեխ.գիտ.դոկտոր, Էլեկտրական մեքենաների և ապարատների ամբիոնի վարիչ, Էլեկտրատեխնիկական ֆակուլտետ, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան, ՀՀ (ղեկավար),
- Պրոֆ. Մարիա-Խոսե Լեմայտրե, PhD կրթության ոլորտում, գործադիր տնօրեն, Միջհամալսարանական զարգացման կենտրոն (CINDA), Չիլի,
- Պրոֆ. Սամվել Պիպոյան, կենսաբանական գիտությունների դոկտոր, Կենսաբանության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոն, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետ, Խ.Աբովյանի անվ. պետական մանկավարժական համալսարան, ՀՀ,
- Դոց. Մերի Բաղալյան, տնտեսագիտության թեկնածու, դեկանի տեղակալ, Կառավարման ֆակուլտետ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ՀՀ,
- Սյուզաննա Ազիզյան, 4-րդ կուրսի ուսանող, Ֆինանսների ֆակուլտետ, Երևանի «Գլաձոր» համալսարան, ՀՀ:

ՈԱԱԿ-ի աջակցող աշխատակազմը.

- Անուշավան Մակարյան, ֆիզմաթ. գիտ թեկն., դոցենտ, Ինստիտուցինալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար և խմբի աշխատանքների համակարգող,
- Անի Մկրտչյան, կրթության կառավարման մագիստրոս, ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման պատասխանատու, թարգմանիչ,
- Աննա Մարգարյան, ՀՊՏՀ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի, քարտուղար-սղագրող: